

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՕՐՈՒԲԱՆ ԱՌԻԹՈՎ

ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊԵԱՆ-ԷՔՍԵՔՏԵԱՆ
Լիմասոլ, Յունուար 2009

Մելգոնեանցիներուս համար սրբազան աւանդութիւն դարձած հոգե-
հանգստեան պաշտօնով եւ Գրիգոր ու Կարապետ Մելգոնեան եղբայրներու
դամբանին առջեւ ծաղկեփունջերու զետեղումով, աղօթքով ու Մելգոնեան
Կրթական Հաստատութեան քայլերգով յիշուեցաւ մեր Բարերարներուն օրը՝
2009, Յունուար 18՝ Սբ. Յովհաննու Կարապետի տօնին ամենէն մօտ Կիրակին:
Եւ ամբողջ շաբթուան ընթացքին Մելգոնեանը գրեթէ չհեռացաւ մտածումներէս,
մանաւանդ որ տարօրինակ զուգահիշութեամբ մը, այս օրերուն ցուցադրուե-
ցաւ Հայաստանի Հանրային Հեռուստացոյցին կողմէ վերջերս (2009) պատրաս-
տուած հարցազրոյցը՝ Պոլսեցի Մելգոնեանցի Բիւզանդ Եանըքեան-Ազպաշեանի
հետ: Հաղորդումին միւթը՝ Բիւզանդին հազարաւոր գիրքերու հաւաքածոն էր.
արտայայտութիւնը՝ գիրքերու ու մեր Բառ ու Բանին նկատմամբ պաշտամունքի
հասնող իր մեծ սիրոյն, որ ծներ էր Մելգոնեանի թանկարժէք գրադարանին մէջ,
երբ իբրեւ նորաբոյս պատանի առաջին անգամ ոտք կոխեր էր հոն երկիւղածու-
թեամբ: Հիմա չափազանց մտահոգ էր ճակատագիրովը իր Մայր Կրթարանի
գիրքերուն զորս կը նկատէր մասունք:

ՎԱԶԳԷՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ

2008ի վերջին ամիսներուն մեծ շուքով նշուեցան ծննդեան հարիւրամեակն
երը մեր ամենէն լուսաւոր եկեղեցականներէն Վազգէն Ա.ի եւ աշխարհահռչակ
աստղագետ-գիտնական Վիկտոր Համբարձումեանի:

Վազգէն Ա. Մելգոնեանը բնութագրած է իբրեւ «Հայկազեան միշտ յաղթող
ոգու փայլատակուն»։ Հաստատութիւնը սփիւռքի առաջին կրթարանն էր,
որուն 60 հոգինոց երգչախումբը պաշտօնապէս հայրենիք հրաւիրուեցաւ
1986ին՝ իր փառաշուք 60-ամեակին: Այս առիթով, դարաւոր Սբ. Էջմիածնի
խնկաբոյր կամարներուն ներքեւ եւ ներկայութեամբ Մեծ Հայրապետին՝
երգչախումբը կատարեց սուրբ պատարագի երգեցողութիւնը, ղեկավարու-
թեամբ Սեպուհ Աբգարեանի: Մատուցուեցաւ նաեւ հոգեհանգստեան պաշտօն
Մելգոնեան անմահ Բարերարներու յիշատակին: Պատմական օր մը եղաւ այս
Հաստատութեան երգչախումբին ու պատասխանատու ուսուցիչներուն համար,
որոնք ոչ միայն արժանացան Վեհափառին բարձր գնահատանքին այլ եւ
լուսանկարուեցան Անոր հետ ու ճաշի հիւրը եղան:

Մելգոնեանը յիշուած է նաեւ Վիկտոր Համբարձումեանի յուշերուն մէջ:
1960ական թուականներու վերջը մեծ գիտնականը կը հրաւիրուի Սամհա՝
աստղագիտութեան պատմութեան հարցերուն նուիրուած համագումարի մը:
Մոսկուայէն կը թռի Աթէնք եւ ապա դարձեալ ինքնաթիռով կը հասնի յունա-
կան Սամու կղզին: Օդակայանին մէջ կը ծանօթանայ, իր բառերով, «... շատ
գործունէայ եւ բարեհամբոյր օրիորդի մը, որ շատ կիրթ ու շնորհքով հայուհի
մըն էր: Ան կ'աշխատէր վաճառելով օդանաւատոմսեր՝ ըլլալով օդանա-

լային ընկերության պաշտօնեայ: Պետք է ըսել որ ի՞նք է օդակայանին մէջ ամէն բան կազմակերպողը: Ես՝ ի հարկէ, հարցուցի իր կրթութեան մասին, եւ ան պատասխանեց ըսելով, թէ Կիպրոսի մէջ աւարտած է Մելգոնեան Կրթական Չաստատութիւնը: Չգրեցի ինծի համար անոր անունը, բայց մինչ եւ հիմա կը մտածեմ թէ ինչքա՞ն այդպիսի շնորհալի եւ գործիմաց օրիորդներ ու երիտասարդներ ունինք մենք, որոնք ստիպուած են սպասարկելու օտարներուն» (Ակադեմիկոս Վ.Յ. Յամբարձումեան, Կեանքի Դրուագներ, Երեւան, 2003, էջ 74):

ԿԻՊՐՈՍ, 2008 ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ

Պզտիկ Կիպրոսի մէջ, 2008ին, լոյս տեսան երկու հայերէն գիրքեր. «Սիրերգ» քերթուածներու փունջը՝ հեղինակութեամբ Պրն. Վարդան Թաշճեանի եւ «Պատանեկան Թատրերգութիւններ»՝ մշակուած Տիկ. Սարի Սոմաքեանի կողմէ: Երկուքն ալ Մելգոնեանցի են:

Մելգոնեանցի Թաթիանա Ֆերահեան արժանացաւ 2008ի Պէյճիմկի Ողիմպիական Fine Arts ցուցահանդէսին ոսկի պատուանշանին:

Եւ վերջապէս, 2008ին հրապարակուեցան Մելգոնեանի եւ Մելգոնեանի վաստակաշատ արուեստագէտ-ուսուցիչ Սեպուհ Աբգարեանի՝ Պոլսոյ եւ Մոսկուայի Քրեմլինի պալատին մէջ 20,000 ունկնդիրներու ներկայութեան ղեկավարած Գոհար համոյթի համերգներուն տեսահոլովակները:

ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ

Արդարօրէն կ'ուրախանանք երբ լայնածաւալ մեր աշխարհի մութ ու լոյս քառուղիներէն կամ հրապարակներէն մէկուն վրայ կը բարձրանայ կոթող մը ի յիշատակ բռնարարքի զոհ գացած մեր բիւրաւոր նահատակներուն: Փակուած կը պահենք, սակայն, Մելգոնեանը, սփիւռքի թերեւս ամէնէն վեհաշուք կոթողը՝ նուիրուած Ապրիլ 24ին: Կոթող՝ որ քար չէր միայն, այլ ապրող յուշարձան, կենդանի վկայութիւնը մեր վերածնունդին: Հո՛ս է դամբանը մեր բարերարներուն՝ որոնք անմնացորդ հաւատացին գալիք սերունդներուն: Հո՛ս է նոճիներու պուրակը առաջին որբերուն՝ որոնք մարդացած ու հայացած մեկնեցան ի սփիւռս աշխարհի եւ հայկականութիւն ճառագայթեցին ամենուրեք: Հո՛ս էր մանաւանդ որ մեր ոսկեղինիկ լեզուն ու հոգեթով գիրերը հնչեցին բարձրածայն: Ու հայ աղջիկներ ու հայ տղաք մեր հայկական պարերուն խրոխտ դոփիւնով թնդացուցին պատմական հանդիսասրահը: Մելգոնեանը... ամէնէն ազնիւ վրէժը եղաւ մեր Հայոց Ցեղասպանութեան: Հայ Դատի յաջողութեան յաղթական սկիզբն էր ան: Ու հիմա... դատապարտուած է լռութեան:

ԻՆՉՈ՞Ւ ՓԱԿՈՒԵՑԱՒ ՄԵԼԳՈՆԵԱՆԸ

Ոչ ոք տակաւին հասկցած է պատճառը: Բայց եթէ թերացումներ ու թերութիւններ կային, ինչո՞ւ չսրբագրուեցան անոնք ժամանակին: Ինչո՞ւ պէտք եղած առաջնորդութիւնը չտրուեցաւ:

ԲԱՄԲԱՍԱՆՔ ԵՒ ՄԵԼԳՈՆԵԱՆ

Մելգոնեանը զո՞հ գնաց արդեօք բամբասանքի: Ուրիշ հաստատութիւններու եւ կառոյցներու սխալները չեն արդարացներ երբեք մեր հաստատութիւններուն ձախողութիւնները: Եւ քննադատութիւն ու ինքնաքննադատութիւն մեկնակէտն են յառաջդիմութեան: Առողջ քննադատութեան բացակայութիւնն է որ մեզ կ'առաջնորդէ դէպի ինքնագոհութեան լճացումը:

Մելգոնեանը, իբրև կրթական հաստատություն, բնականաբար ունի իր բազմապիսի դժուարություններն ու սխալները: Բայց ինչո՞ւ Մելգոնեանի թերությունները խոչորացոյցով դիտուեցան ոմանց կողմէ եւ խօսակցութեանց նիւթ դարձան սուրճի գաւաթներու շուրջ: Եղան անձեր որոնք աշխատեցան զիրար գերազանցել թէ ո՞վ կրնար աւելի շատ թերիներ մատնանշել եւ ասդին-անդին խօսիլ:

Ու հարց է, թէ որո՞նք կը բամբասեն: Անոնք որոնք կը փափաքին ցոյց տալ թէ շա՞տ բան գիտեն, շա՞տ սխալներ կը տեսնեն կամ անոնք որոնք պահանջքը կը զգան առաջինը ըլլալու բամբասանքի լուրերը, սխալ կամ ճիշդ, ասդին անդին հասցնելու եւ «ծառայութիւն» մը մատուցած ըլլալու գոհունակութիւնը զգալու:

Երբ կը մտածեմ այս տխուր նիւթին մասին, միշտ կը մտաբերեմ հայրենի պետական-քաղաքական մեծ գործիչ Ալեքսան Կիրակոսեանը, ժամանակակիցը Հայաստանի երեք Հանրապետութիւններուն: Իր սքանչելի եւ խիստ ուսանելի «Մայրամուտի Շեմին» գիրքին մէջ ան անդրադարձած է 1937ի ցաւագին իրադարձութիւններուն, երբ իր իսկ բառերով՝ թափ էին առեր «մատնութիւններն ու բանսարկութիւնները»: Եւ ժամանակի բռնադատութիւններուն զոհ գացին ու անիրաւօրէն դատապարտուեցան Եղիշէ Չարենց, Ակսեալ Բակունց, Գուրգէն Մահարի, Վահան Թոթովենց եւ շատ ուրիշներ, մէկ խօսքով մեր մտաւորականութեան ընտրանին:

Միշտ ափսոս է երբ իշխանութիւններ ու ղեկավար մարմիններ չեն առաջնորդուիր փաստացի վկայութիւններով, լայնախոհութեամբ, կենսականը մանրութեմ զատորոշելու եւ համեմատութիւնները պահելու կարողութեամբ:

Անդրադառնալով Մելգոնեանին, կը փշաքաղուիմ երբ կը կարդամ կամ հեռատեսիլին վրայ կը տեսնեմ լուրեր Ամերիկայի, Անգլիոյ կամ Կիպրոսի օտար կրթական հաստատութիւններուն մէջ եղած աներեւակայելի անկարգութիւններուն մասին: Տարիներով աշխատած եմ Մելգոնեանի մէջ եւ ինքնաշարժիս վրայ մէկ բիծ չէ գծուած ուսանողներուն կողմէ:

Ուսումնական մակարդակի վրայ իրողութիւն է որ Պէյրութի Ալեք Մա-նուկեան Կեդրոնին՝ դպրոցներու համար կազմակերպած Բանաստեղծական Յօրինումի մրցանքներուն՝ մրցանակներուն առիւծի բաժինը միշտ շահած է Մելգոնեանը, համաձայն խօսնակի Պէյրութի թղթակիցին:

Մելգոնեանի դասացուցակին վրայ, բնականաբար, բաւական ժամանակ կը տրամադրուէր հայագիտական դասանիւթերուն (անհրաժեշտութիւն մը. այլապէս պիտի չարդարանար գոյութիւնը հաստատութեան): Հակառակ այս իրողութեան, արտաքին քննութիւններու մէջ ալ փայլուն արդիւնքներ արձանագրուած են: Պուլկարահայ Վահան Ինճէեան G.C.E. Յառաջացեալ Մակարդակի քննութեանց մէջ իր ունեցած բացառիկ յաջողութեանց շնորհիւ իր համալսարանական ուսումը ստացաւ Անգլիա: Անցեալ տարի Հարվըրտի համալսարանէն առաւ ան իր դոկտորականի վկայականը: Հայաստանէն Յովիկ Աթաբէկեան 2004ի ամառը G.C.E. Յառաջացեալ Մակարդակի եօթը դասանիւթի քննութեանց մէջ յաջողեցաւ միանուագ, հինգին՝ «A» աստիճանով:

Միւս կողմէն, օտար վարժարան յաճախող ուսանողներ, առանց հայագիտական տառերու համար պահանջուած «պարտաւորութիւններ»ուն, իրենց ամբողջ ժամանակը կրնան յատկացնել արտաքին քննութիւններու պատրաստութեան: Տակաւին, ծնողները թող ըսեն թէ որքան ու որքան դրամ կը տրամադրեն անձնական դասերու համար:

* * *

1. ՄԵՐ ՕՏԱՐԱՍՈՒԼՈՒԹԻՒՆԸ

2. ՄԵԼԳՈՆԵԱՆԸ ՊԵՏՔ ԶԷ ՓԱԿՈՒԷՐ

Սփիւռքը այսօր, ուժացումի եւ անհետացումի զառիթափին վրայ, որեւէ ատենէ աւելի պէտք ունի վերակազմակերպուած ու վերակենսաւորուած Մելգոնեանին եւ նման այլ երկրորդական վարժարաններու:

Բայց պէտք է վերափոխուի նաեւ ու մանաւանդ՝ մեր ազգային արժէքները ստորագնահատելու մեր քաղքենիական ու հիւանդագին մտայնութիւնը: Խիզախ ու յանձնառու մտաւորական Պրն. Յակոբ Պալեան իրաւացիօրէն կը խարանէ մեր օտարամալութիւնն ու դիրքապաշտութիւնը. եւ կը մատնանշէ թէ «... ծագումով հայ էին Բիւզանդիոնի աւելի քան տասնեակ մը կայսրերը: Ի՞նչ բանի ծառայեցին»: Արդարեւ, ի՞նչ բանի կը ծառայէ երբ հայ ուսանող մը, շրջանաւարտ անուանի համալսարանէ մը՝ ամերիկացի դերասանուհիի մը կեանքին մասին ժապաւէն կը պատրաստէ, մեծ գոհունակութիւն պատճառելով իր մօրը:

Տկարութեան ցուցանիշ եւ ինքնախաբէութիւն չէ՞ երբ զօրաւոր օտարին կռքնելով կը կարծենք թէ մենք եւս կ'ըլլանք զօրաւոր ու կարեւոր եւ կ'ունենանք «դիրք»: Մեր ժողովուրդի իսկական ու մնայուն յարգանքին ու սիրոյն բարձրագոյն «դիրք»երը նուաճած են, օրինակի համար, Մեսրոպ Մաշտոց կամ Ղեւոնդ Երէց, երկու պարզ կղերականներ, մեր պատմութեան ճակատագրական պահերուն՝ մեր ազգին իրենց մատուցած անանձնական ծառայութեանց եւ ցուցաբերած անմնացորդ նուիրումին համար:

Բայց ո՞ր պիտի պատրաստուի հայեցիութեամբ շնչող ու հայութեամբ տագնապող սերունդ մը որ նուիրուի ազգային ծառայութեան՝ եթէ ոչ հայեցիութեան ամբողջ հայադրոշմ հայ երկրորդական վարժարանին մէջ:

Կը մասնաւորեմ երկրորդական վարժարանը, որովհետեւ բնական պատճառներով, պատանին այս տարիներուն է որ կը կազմաւորուի ֆիզիքապէս, միտքով ու հոգիով եւ կը ստանայ զգացողութիւններ ու տպաւորութիւններ որոնք կ'ընկերանան իրեն՝ կեանքի ամբողջ տեսողութեան:

Համալսարաններն ու Հետազօտական Կեդրոնները (Research Centre), լաւագոյններն իսկ, առ առաւելն կը ջանքեն գիտութիւն: Ո՛չ ալ մեր օրերու ամէնէն արդիական տեղեկատուական միջոցները, համակարգիչ-համացանց-կայքէջ, կրնան երբեւիցէ փոխարինել դպրոցը: Անոնք օժանդակ են միայն: ՍԵՐՈՒՆԴ կը պատրաստուի երկրորդական վարժարանին մէջ: Եւ սփիւռքի հայ մարդուժի, հայ նոր սերունդի պատրաստութեան ամենահարազատ միջավայրը՝ հայ երկրորդական վարժարանն է, ազգային գիտակցութեան ու ազգային ոգիի մեր ամէնէն հզօր դարբնոցը, մեր լինելութեան գլխաւոր երաշխիքը:

Երբեմն կ'աւաղենք որ մօտ ապագային կրնանք չունենալ ազգային դեկավար, հոգաբարձու, տնօրէն, ուսուցիչ, հայ գրող կամ հայ մամուլ: Ուշացած չէ՞նք արդէն ցանելու այն ինչ որ կ'ուզենք հնձել:

Եթէ չունենանք հայ երկրորդական վարժարան, ո՞ր պիտի պատրաստուին իբրեւ ուղեցոյց ու ներշնչումի աղբիւր ծառայելու կոչուած մեր դեկավարները, կամ մեր ազգային լեզուին ու ազգային մշակոյթին հմայքը փոխանցելու յանձնառութիւնը ունեցող տնօրէններն ու ուսուցիչները: Կ'ունենա՞նք հայ գրող կամ հայ մամուլ եթէ մեր երկրորդական վարժարաններուն մէջ հայ ուսանողը ձեռք չբերէ հայերէն ընթերցելու վարժութիւնն ու հոգեկան հաճոյքը:

Հայ ընտանիքին, հայ եկեղեցւոյ, հայ կազմակերպութիւններու կողքին՝

առաւելաբար եւ մասնաւորապէս հայ երկրորդական վարժարանին մէջ պատրաստուած յանձնառու հայ սերունդն է որ տէրն ու պահապանը պիտի ըլլայ մեր մեսրոպաշունչ լեզուին, մեր դիւցազնական պատմութեան ու մեր ազգային դարաւոր մշակոյթին: Որովհետեւ կը կոխկռտուին ու կ'անհետանան ճակատագրականօրէն այն ազգերը որոնք ինքնուրոյն եւ ինքնատիպ մշակոյթ չունին: Ու կրնան փշրուիլ աղիտալիօէն ու անշրջելիօրէն՝ Հայոց Պատմութեան մեզի հասած շղթային օղակները:

Մեր դժուարին ու բարդ օրերուն, մեր միութիւններուն, կազմակերպութիւններուն ու յանձնառու ղեկավարներուն սրբազնագոյն առաքելութիւնը եւ ամենավեհ նպատակը կրնայ ըլլալ հայ մարդուժի պատրաստութիւնը՝ Սելզոնեան Կրթական Հաստատութեան նման գիշերօթիկ երկրորդական վարժարաններուն մէջ: